ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 621 - Ա 09 դեկտեմբերի 2019 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Լ.ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 224-Ն որոշման հավելված N 1-ի 12-րդ կետը

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 11^{00}-ին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Հարությունյան Վանիկ (մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ), Խաչատրյան Արամ (մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ), Շահբազյան Հասմիկ (մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ), Նարեկ Գրիգորյան (Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ), Նելա Մովսիսյան («Ֆիլհարմոնիա» պրոդյուսերական կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Վանիկ Հարությունյանին, քարտուղար՝ Հասմիկ Շահբազյանին:

3.Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

09.12.2019

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Գնել Սանոսյան
Գ.Սանոսյան
Գ.Սանոսյան
Գ.